

սպան կարող է պատմել արտաքին գործոց նախարարին: Իսկ ինչ վերաբերում է թերթերին ու լուրերին, ինչպէս եւ հանրային կարծիքին բրիտանական հրամանատարութեան մասին Անգրկովկասում, այն նամակում, որ ես պատիւ եմ ունեցել յանձնելու Վրաստանի կառավարութեան, որոշ կերպով յայտնուած էր տեսակէտը մեր նպատակների մասին Անգրկովկասում: Մեր գալու նպատակն էր սպառնալիկ երկրի անդորրութիւնը եւ խաղաղութեան վեհամտորդից առաջ եղած status quo-ն: Իսկ ինչ վերաբերում է այն վայրերին, որոնք առաջ գրաւուած էին թուրք զորքերի կողմից, այդ տեղերը գրաւեցին բրիտանական ուժերը: Անգլիայի արտաքին քաղաքականութիւնը բաւական պարզ է արտայայտուած Վրաստանի նկատմամբ Լոնդոնից ստացուած հետազրի մէջ: Անցնելով Բաթումի անդլիական հրամանատարութեան քաղաքականութեան, ես պէտք է յայտնեմ ի գիտութիւն ձեզ, որ ներկայ վայրկեանիս Անգլիան ուրիշ քաղաքականութիւն վարել չի կարող»:

ժողովաւորապէս. — «Վրաստանի կառավարութիւնը չի կասկածում ձեր բարեացակամ վերաբերումի մասին, բայց շնորհիւ զօրավարի անընդհատութեան տեղի են ունենում հետեւեալ բաները. խօսքը փաստերի մասին է, և եթէ մեզ սխալ են իրադեկ գարծրել մեր գործակալները, ձեր տեղեկութիւններն էլ ճիշդ չեն. օրինակ, Արտահանի գաւառի շարժումն սկսուեց Փոքիսովի շրջանից, եւ դեռ այն ժամանակ, երբ տակաւին այստեղ էր զօր. Միլը, արտաքին գործոց նախարարը տեղեկացրեց նրան, որ այնտեղ կազմակերպուած են խմբեր, որոնք Արտահանից պատրաստուած են շարժուել Ախալցխայի վրայ»:

Զօր. Ուօկկեր. — «Ճիշտ հակառակը: Ես տեղեկութիւններ ունեմ այդ մասին գնդ. Ռիչլից եւ Կապ. Մանիից, որոնք քննելով իրերի վիճակը, եկան այն եզրակացութեան, որ ամէն ինչ կատարուել է Ախալցխայի գաւառում»:

ժողովաւորապէս. — «Ես խօսում եմ՝ պահելով ժամանակագրական կարգը: Չեր սպաները այժմն են եկել, իսկ իմ յիշած խօսակցութիւնը եղել է այն ժամանակ, երբ դեռ զօր. Միլը թիֆլիսում էր: Արտաքին գործոց նախարարը

հազարդեց նրա պարոն Աթաբէգովի արկածախնդրութեան մասին, եւ զօրավարը խոստացաւ նոյնիսկ հեռացնել նրան այնտեղից»:

Զօր. Ուօկկեր. — «Ես համաձայն եմ, որ այս դէպքում իրերի վրայ պէտք է նայել ժամանակագրական տեսակէտից եւ այդ տեսակէտից կարող եմ հազարդել, որ տակաւին զօր. Միլի գալուց առաջ մենք գիտէինք, որ վրացիները յառաջխաղացման են սկսել ճիշդ Ախալցխայի գաւառից, սպանել են մի քանի մարդ եւ գրաւել են գնդացիները: Ես չեմ կասկածում, որ երբ երկու թշնամի ուժեր կանգնած են միեանց դէմ, յարձակման ընդունակ են հաւասարապէս ինչպէս թաթարները, այնպէս եւ վրացիները»:

ժողովաւորապէս. — «Ո՛հ, այդ այդպէս չէ: Դեռ պատերազմից առաջ մենք գիտէինք, որ Փոքիսովի շրջանում տեղի են ունենում ապստամբների համախմբումներ: Մահամապահ զօրամասի հրամանատար զօր. Մակաւը արտօնութիւն էր խնդրում անցնելու սահմանը, գրաւել Փոքիսոն եւ գրանով մէկ անգամ ընդ միշտ առաջն ստնել այնտեղ ծագելիք անկարգութիւնների Վրաստանի հանրապետութեան նկատմամբ, բայց մենք չարտօնեցինք եւ իր ժամանակին ամէն բան հազարդեցինք բրիտանական հրամանատարութեան»:

Զօր. Ուօկկեր. — «Բայց եւ այնպէս, չնայած դրան, մի վրացի սպայ անցաւ սահմանը: Ես յիշում եմ այս փաստը, որպէսզի ցոյց տամ վարչապետին, որ իր տեղեկութիւնը ճիշդ չէ»:

ժողովաւորապէս. — «Դժբախտաբար, զօրավարի տեղեկութիւնները չեն համապատասխանում իրականութեան: Ես գրաւոր կերպով կ'ուզարկեմ ձեզ նկարագրութիւնը ամբողջ պատահածի անվիճելի ապացոյցներով, որ շարժումը Վրաստանի դէմ ուղղուած ու գործադրուած է Արտահանի վրայով»:

Զօր. Ուօկկեր. — «Իմ բոլոր տեղեկութիւնները ստացուած են անգլիական ազգիւրներից: Ինչ վերաբերում է պարոն Աթաբէգովին, նա իմ էլ գիւրս չի գալիս բնաւ եւ իմ Բաթում գտնուած ժամանակ ես նախապէս չապրի այդ պարոնին, որ եթէ թոյլ տայ սրելէ արարք, նրան ուղղակի կը կախեն: Որքան ինձ